

Արձանագրություն թիվ 5

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ մարտի 22-ին

Օրակարգում

1. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան-Գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 15-ը: Ունենք մեկ հարգելի բացակայություն: Ներկայացնում այսօրվա օրակարգը: Բոլորը ծանոթ եք օրակարգին, եթե առաջարկություններ չկան անցնեք օրակարգի առաջին հարցին:

Տ.Վ.Ղոչիկյան- Սկսենք ավարտական աշխատանքների ընթացքի քննարկան հարցին : Ամբիոնի վարիչները ներկայացնեն իրավիճակը

-Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյան- Ամբիոնում ավարտական աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Ունենք 2 ավարտական աշխատանք սննդի անվտանգությունից, 1 ավարտական աշխատանք ֆարմացիայի ինստիտուտից, 2 մագիստրոս ֆարմացիայի ինստիտուտից և 3 հեռակա: Ունենք 1 ուսանող ֆարմացիա ինստիտուտի հեռակա բաժնից Լ.Խ.Գալստյանի մոտ, որը չի ներկայացել: Ուսանողի մասին տեղյակ է պահվել դեկանատում՝ դեկանի տեղակալ Ա.Գալստյանին:

- Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Ա.Մարգարյան- Ամբիոնում աշխատանքները ընթանում են նորմալ, պարբերաբար ստուգվում են ուսանողների տեսրերը: Ոմանք արդեն սկսել են ձևակերպման փուլը:

-Տ.Վ.Ղոչիկյան – Ուսանողների աշխատանքային տեսրերի ստուգման պրակտիկան մեզ մոտ երկար տարիներ կիրառվում էր: Բավականին դրական երևույթ էր: Կարծում եմ պետք է նորից անդրադառնանք այդ պրակտիկային:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Բ.Մարտիրոսյան- Մեր ամբիոնում ավարտական աշխատանքները կատարում են 2 – ուսանող քիմիա բաժնից և 3 ուսանող սննդի անվտանգության բաժնից: Նորմալ հաճախում են հենց հիմա էլ աշխատանքային փուլում են:

Տ.Վ.Ղոչիկյան – կարևորը բոլոր աշխատանքները ընթանում են նորմալ և պատրաստ կլինեն ժամանակին: Վերնագրերի վերջնական տեսքը՝ անհրաժեշտության դեպքում փոփոխված, կախված փորձի ընթացքից, պետք է ներկայացնել եռալեզու ապրիլ ամսվա կեսին: Եթե ավարտական աշխատանքների

ամբողջականացման համար նյութերի, ապակեղենի կամ այլ խնդիրներ ծագեն. Զգուշացրեք հնարավորինս կօզնենք:

-Խորհրդի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- անցնենք օրակարգի երկրորդ հարցին՝ բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում: Մենք ծրագրի փոփոխության մասին մեր նախնական կարծիքը արդենիսկ արտահայտել ենք: Սակայն պետք է քննարկել և տալ առաջարկությունների հիմնավորումը:

Ն.Ա.Դուրգարյան- Ես հիմա էլ պնդում, որ այս ծրագրային փոփոխությունը կատարվում է ի վնաս ուսանողի: Մասնագիտական առարկաների կրճատումը ամենասխալ քայլն է: Կրեալիոնների շարժունակությունը մեկ կիսամյակով չի կարելի սահմանափակել: Երկրորդ կարևոր խնդիրը մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներին է վերաբերվում: Այս երկու առարկաները խիստ կարևոր են առաջին կուրսեցու համար հետագա մասնագիտական առարկաների յուրացման գործընթացում: Սակայն այդ առարկաների կամընտրական բլոկ տեղափոխելը՝ 7-րդ կիսամյակում, անիմաստ է, քանզի այդ գիտելիքները արդենիսկ պետք չեն: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ քիմիկը այն պետք անցնի նույն խորության ինչ-որ ֆիզիկոսը կամ մաթեմատիկոսը 7-րդ կիսամյակում: Այս մոտեցմամբ մենք իսկ մեր ձեռքով բերում ենք բնական և ճշգրիտ գիտությունների զարգացման անկման:

-Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- Եթե հիշում եք 3 տարի առաջ մենք հրավիրել էինք ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետների այն դասախոսներին, ովքեր դասավանդում են մեզ մոտ և խնդրել էինք մշակել նոր ծրագրեր համապատասխան կրեդիտներով, որը ավելի մոտ է մեր մասնագիտական պահանջներին: Այս նոր ծրագիրով կրճատվում է450 լսարանային ժամ, որը վնասում է ուսանողին:

Ա.Բ.Մարտիրոսյան- Այս ծրագրով ուսանողը ի վիճակի է մասնագիտական առարկաներ ընտրել նաև այլ բուհերից: Սակայն ԵՊՀ տարբերվում է իր մասնագետներով և դասավանդման որակով: Ուսանողը այս մասով էլ է վնասվում՝ օրինակ

1, Մանկավարժական համալսարանում առանձին քիմիա առարկա չկա: Այնտեղ առաջարկվում է միայն <<քիմիայի դասավանդման մեթոդիկա>>: Այս տարբերակը տալիս է միայն դասավանդման մեթոդաբանություն քիմիա առարկայից:Այս առարկան համարժեք չէ քիմիայի ֆակուլտետի տված մասնագիտական գիտելիքներին:

2, Բժշկական համալսարանում մեկ, որոշ բաժիններում երկու կիսամյակի շրջանակներում տրվում է գիտելիքներ անալիտիկ քիմիայի, ֆիզիկական քիմիայի և օրգանական քիմիայի ոլորտներից:

3,Ճարտարագիտական համալսարանը քիմիայի բաժին չունի այլ ունի միայն ամբիոն: Այն նույնպես չի պավարարում ԵՊՀ-ի պահանջներին:

Ակնհայտ է, որ նորից այս փոփոխությունը վնասում է գիտության զարգացմանը:

Տ.Վ.Ղոչիկյան-Այսպիսով Ձեր կատարած ուսումնասիրություններից ակնհայտ է, որ ուսանող նույն առարկան նույն կրիդիտներով չի կարող ստանալ ՀՀ-ի որևէ այլ բուհ-ում:

Շ.Ա.Մարգարյան- Ներկայացվող բակալավրի ծրագրի վերաբերյալ կատարել ենք հարցումներ կենսաբանության ֆակուլտետում, որտեղ մենք ունենք դասաժամեր: Նախնական տվյալներով կենսաբանության ֆակուլտետը քիմիա առարկայից է հանել 75 ժամ: Եթե շարժունակության պատուհանը պենք է ապահովվի, ապա այն պետք է լինի 2կամ ավելի կիսամյակների համար: Պակասեցնել կրճատվող լսարանային ժամերի կրեդիտները: Կրճատման մոտեցումները կատարելիս պետք է հաշվի առնել ֆակուլտետի հոսքը՝ բնագիտական, ճշգրիտ և հումանիտար:

Ռ.Ս.Հարությունյան- Ըստ առաջարկության մենք պետք է ուղղորդենք կամընտրական առարկաների հարցում ուսանողներին, իսկ այլ ֆակուլտետներից քիմիայի ֆակուլտետ հոսք լինելու է, թե ոչ:

Տ.Վ.Ղոչիկյան – Այլ ֆակուլտետներից հոսք չի լինի: Տարիներ առաջ մենք քիմիա առարկան դասավանդում էինք Ֆիզիկայի ֆակուլտետի՝ պինդ ֆիզիկայի ամբիոնում, մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնում: Այժմ այդ ֆակուլտետներում քիմիա առարկան ընդհանրապես հանված է:

Ն.Ա.Դուրգարյան- Ակնհայտ է, որ ծրագրային փոփոխությունները ներկայացված են միջազգային փորձից և ուզում են ԵՊՀ-ի կրթական ծրագրերը համապատասխանեցնեն միջազգային նորմերին: Այս դեպքում պետք է նաև պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածություններն էլ 720-ժամից պակասեցնեն: Պրոֆեսորի 1 հաստիք ծանրաբեռնվածությունը պետք է լինի 70 ժամ: Ուզում եմ նաև նշել, որ այս ծրագիրը կարելի է կիրառել միայն հումանիտար հոսքի համար, և ոչ բնագիտական և ճշգրիտ հոսքերի համար: Վերջապես ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության մեջ շեշտը դրվում է բնագիտական և ճշգրիտ գիտությունների զարգացման վրա: Որը բազմիցս նշվել է վարչապետի ելույթներում և ԵՊՀ ռեկտոր Հ.Վ.Հովհաննիսյանը: Վերջերս նաև այդ հարցին անդրադարձել է //21,02,2022// ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը ՀՀ ԳԱԱ հանդիպման ժամանակ շեշտել է, որ իշխանության համար առաջնային դերակատարում ունի գիտության ոլորտը: Հայաստանում գիտակրթական ոլորտի ներդրումներն ամենաարդյունավետն են եւ հենց դրա վրա էլ կարող է հիմնվել Հայաստանի զարգացումը: Նման փոփոխությունները բակալավրիատի ծրագրում հակասում են կառավարության գիտության մասով, որդեգրած քաղաքականությանը:

Եկեք ի մի բերենք առաջարկությունների փաթեթը:

-Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- «Անանիա Շիրակացու» անվան Ճեմարանը գրախոսման է ուղարկել խնդիրների ժողովածու ավագ դասարանների աշակերտների համար: Խնդրագիրքը տրվում է անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնին ծանոթանալու և կարծիք հայտնելու համար: Ցանկացողները կարող են մոտենալ ամբիոնի վարիչին, նույնպես ծանոթանալ:

Նիստի նախագահ , պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Նիստի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Մամվելյան